Վերջին կարծիք գեղանաշարժի վերաբերյալ։

Վերջապէս գետնաշարժի գաղտնիքը մեկնումեն և այսպէս՝ ջուրը թափանցելով գետնի խորքերը, ողողում ու մաքրում է շուտով հալող քարերի կամ հողերի մասերը — որից յետոյ գետնի տակ բացուումեն ահագին անջրպետներ կամ քարայրեր։ Գետնի մի մասը դատարկելով այդ անջրպետի կամ դատարկ քարայրի վերևը անպատճառ կփլչի իր ծանրութեան պատճառաւ, որից անշուշտ կհետևի շարժ կամ ծօծ։ Իսկ անջրպետների միջի օդը թէ իր ճնշուելու երեսից և թէ իր տեղափոխութեան երեսից խաղալով գետնի տակին հաղորդումէ նրան ալեյին շարժ։ Այս բացատրութիւնները կամ կարծիքները քննելու համար դէմ առնել չենք կամենում. միայն այսքանս հարկաւոր է ասել բացատրութեանց միջից դալիս է Վոլտա կանական և Պլուտոնեան բացատրութիւնների հոտը, բայց դրանցից ոչ մէկն էլ կանոնաւոր և ճիշտ փաստեր չունեն։ Կարծիք չկայ որ հողային մասերի ողողումից կամ նոցա մէկ մասի բարձրանալուց, իսկ միւսի ցածանալուց միայն զանազան փլատակներ կամ հողային ուռոյցներ կարող են երևնալ, այլ ոչ ամբողջ գետնաշարժ։

(Ս-ի-ն է յեր-ի-ց)

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՏԱՐԱԲԱՂԴ ՀԱՅ ՄԱՆՈՒԿԸ

Անօթի, ծարաւ, գլուխը քաշ գնած
Իւր ծնողներից վաղուց որբացած
Հօր տանից, տեղից արդէն հեռացած
Շրջում էր մանուկը մտքով մոլորուած։

Ի՜նչպէս անգթայ սիրտ պէտք է լինէր,
Որ այս թշուառին տեսնէր չ՚ցաւէր.—
Բոկոտն, գլուխը բաց, շորերը պատռուած
Աղի արցունքով աչքերը լցուած,

Իւր հայրենիքից, ծնողներից զրկուած
Օտար աշխարհում գերի մատնուած,
Անգութ մարդերից հալածուած տանջուած—
Խե՜ղճ մանկանն այս էր ճակատին գրուած։

Շատ տեղ ման եկաւ. շատերին խնդրեց
Իւր սրտի ցաւերն շատերին պատմեց.
Բայց նորա խնդիրն ի զուր անցկացաւ
Սրտի զգացմունքն ոչ ոք չ՚իմացաւ։

Տարաբաղդ մանուկն դարձեալ հեռացաւ
Գնաց մի սիրուն դաշտի մէջ մտաւ.
Մի դաշտ, ո՛ր բնութեան գեղեցիկ ձիրքերն
Կը շոլացնէին մարդկային աչքերն։

Այնտեղ, քիչ հեռու մի քար նըկատեց
Գնաց յուսահատ և վրէն նստեց,
Գլուխը քաշ գձեց սիրտը լը՚քցրուեց
Հին յիշատակներն նորից միտ բերեց։

Երգեցիկ թռչնոց քաղցր ձայները,
Գոյնզգոյն ծաղկանց անոյշ հոտերը—
Այս էր,—եթէ ո՛չ խորին լռութիւն
Տիրում էր այս մեծ դաշտումը անհուն։

Մարդ չ՚կար այնտեղ. միայն թէ մի կին
Հեռուից տեսաւ քամբաղդ մանուկին.
Մօտեցաւ տեսաւ յուսահատ նստած,
Գուլթը շարժեցաւ,—մեղմ ձայնով ասաց։

,,Ո՞ղնի՛ւ դու մանուկ, ինչո՞ւ ես տխուր
,,Ինչո՞ւ ես այդպէս մտածում խիստ սուր
,,Ո՞ր տեղից ես դու, ի՞նչ է քո անուն,
,,Ունի՞ս քեզ հայր, մայր, կամ սեփականատուն։

,,Աչքերդ բա՛ց արա, նայի՛ր այս դաշտին,
,,Վեր կաց զուարթացի՛, լսի իմ խօսքին
,,Ես քեզ կը սիրեմ ինչպէս իմ հոգի,
,,Քեզ կը պահպանեմ ինչպէս իմ որդի։

,,Ո՛վ բարի Տիկին,, ասաց քամբաղդը,
,,Քո մխիթարանք, քո սէր, զրգուանքը,
,,Բաւական չ՚է իմ վշտերս ամոքել,
,,Ես շատ եմ զրկուել. ոչինչ կեանք տեսել։

,,Ո՛չ այս գեղեցիկ ծաղկունքն դաշտի,
,,Եւ ո՛չ դալկայլիկ թռչնոց, որ աստի,
,,Ձե՛ն այնպէս քաղցր ու ինձ զգալի,
,,Որպէս Հայրենին—իմն աշխարհի,
,,Դու կը տա՛ս այն սէրն, այն փայփայանքն,
,,Որ ինձ տալիս էր իմ անոյշ մայրն.
,,Աւա՜ղ զրկանաց, աւա՜ղ իմ անձին.
,,Իմը կորուսի, սուտ է սէր օտրին,
,,Նոր աշխարհ մտել. դեռ նոր աչք բացել
,,Պարզ երջանկութիւնը դեռ նոր ճաշակել,
,,Եւ ահա՛ ի՛նչ կեանք, ի՛նչ երջանկութիւն—
,,Կործանեց իմ ծնողք մահ, թշնամութիւն.
,,Ցանկարծ այդպիսի երջանիկ կեանքից
,,Մի անփորձ մանուկ զրկուի՛ իւր բաղդից—
,,Ցետոյ էլ ի՛նչ կեանք, ի՛նչ ուրախութիւն.
,,Էլ կա՞յ աշխարհում նորան փրկութիւն.
,,Ա՞խ էլ չէ՛ պէտք ինձ ապրել աշխարհում.
,,Իմ հանգստութիւն միայն տապանում—
,,Կը գտնեմ,—այո՛ սառ գերեզմանում
,,Եւ այն, իմացի, իմ Մայր աշխարհում....
Ասաց մանուկը, ուշաթափ ընկաւ
Այն կնոջ սրտին ազգու զարկ տուաւ
Ահով, սարսափով կինը հեռացաւ
Իւր տեսած անցքը ամէնուն ասաւ.
Ազնիւ ընթերցող խղճա թշուառին
Գոնեա՛ դու գնա զարման տար ցաւին.
Գուցէ հասկանաս դու նորա սիրտը
Մեղք է, չմեռնի քամրաղդ մանուկը....

ԻՍԱՅԱ ՎՐԷՂԷԱՆՑ։

1871 Թ Մարտ 9
Ի Տֆիս։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԱՏԱՆԻՈՑՆ Ի ՆԱՅԻՆ

Ցորժամ Փրկիչն ի Սեդոնեան գայր սահմանացն ի Նային,
Ետես զխումբ մեծահանդէս եղուկ կարգամ պատճառին,
Քաղաքն համբուն ի կոծ ի սուգ ի տխրութեան ջաղէին,
Ծաղկափթիթի սմն պատանի հանդչէր ի գիրկ դագաղին,
Մայրն որդեսէր բազմեալ ի սուգ վարսս փետտէր ըզ գլխոյն,
Իսր ի սրտէ նա աշխարէր զմահ միամօր պատանւոյն։
Իսկ կենատուն չոգաւ առ նա էարկ ըզձեռն փրկարար,
Կրկին փչեաց զանմահ հոգի յանդամս նորա դաշկալար։
Բա՜ռէ հրաշից յարեաւ անդէն ձայն մխիթար արձակէր,
Եւ խնդութեամբ ի գիրկս մօրն չքնաղ դիմօք անկանէր։
Տէր, զի՞նչ իցէ ողիտութիւն թէ ո՛չ մահ իմն դառնութեան,
Ցորում ննջէ մարդ բանական, չէ՛ և ի ճաշակ կրթութեան։
Եւ մեք ի նինջ զայս մահ տխուր ողիտութեան ի շիրմին,
Չ՛և էր բացեալ մեր առաջի դրունք կենսաբեր դպրոցին։
Գիտեմք յերկնից մեզ անձկայրեաց ոգիք մեան թարգմանչաց,
Ջրով գիտութեան նոցին ուսման զանդ առոգել մեր մտաց։
Եւ քո այս է փափագ սրտի Հայր Վեհափառ մեր պաշտպան,
Մեզ յառաջել յընթացս ուսման կրեալ զոգի հայկական։
Նման Փրկչին փչեա՛ նոր շունչ յանդամս մեր համազգեաց,
Ցառնել և զոգ նորոգ կենաց ուսմամբ շնչել լուսապանծ։
Դու յարուցեալ Աստուած անմահ Վեհապետիս մեր արքունն։
Շնորհեա զկեանս երկայն աւուրբ խաղաղութեամբ պատարուն։

ԱՆ Գ՝ ԴՈՒ. ԱՂԳ. ՀՈԳ.
ԴՊՐ. ՀԱՅՈՑ ԱՐՅՈՒԹՅՈՅ
ԱՐԴՈՒՆԻ ԱՐՈՒԵԼԵԱՆՑ։

Ի 1871 Թ ԱՊՐԻԼ
Ի Շուշի